

տուածնեղէն վկայութիւնսն, ըստ իմում տկա-
րութեանս կարգեցից » :

Ἰωηανναρηνὸς ὁ **Η** **αὐτοκράτωρ**. ἀντεβλήθη δέ ἡ βίβλος πρὸς τὸ ἐν Καισαρείᾳ ἀντίγραφον τῆς βιβλιοθήκης τοῦ αἰγίου Πατριάρχου χειρογεγραμμένον αὐτοῦ. **Ζήλ.** **Ευθωφὶ** **μαστορί** **Γεωργίου** **Πατριάρχου** **Κωνσταντινουπόλεως** **ἐκ** **τῆς** **καθολικῆς** **βιβλιοθήκης** **(1784,** **π. 692),** ἀντεβλήθη δὲ τῶν πράξεων καὶ καθολικῶν ἐπιστολῶν τὸ βιβλίον πρὸς τὰ ἀρχιεπιτ. ἀντίγραφα τῶν ἐν Καισαρείᾳ βιβλιοθηκῆς Εὐδο-

ճնշու ԹՕԲ Սաքփլուս. Սյա ծանօթութիւնը
 չի գտնուիր Հայ աւստուածաշունչ ձեռագրաց
 մէջ. և Հետաքննական է որ նոյն Թարգմանու-
 թիւն Համաձայն H գրչագրին կը պահէ գծա-
 ռութեան թիւնն որ ի վերջ պարտական թղթոց,
 ուր եւթադեան գրչագիրք ի քաց թողոյն.
 Թէպէտ ունին նման ծանօթութիւն մը յա-
 րակից կաթուղիէ թղթոց, զոր չենք գտնիր
 Հայկական մէջ:

(Շարաշարենի)

ԴԱՍՏԻԱՐԱԿ ՌԻԹԻԻՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻ ԹԻՒՆ. — « Կրթութիւնը օրօրոցն էլ պարտի սկսիլ »: — Հեղինակ իշխանութիւն **Գ. Ուռուսով:** — Թարգմանեց զառ. դիւրեմէ Վարդան Գ. Թովմասեան. — Կ. Պոլիս, Տարագրութիւն **8. Մասի** Թոսեան. 1894.

Ինչպէս ծաղիկն՝ բնութեան մէջ, մերթ զմերթ մը կը զգուի կը փայփայուի, և մերթ խորշակահար կը խամրի և ոստտիկ հողէ մը կը թօթափի. այսպէս ալ մահուէն, մարդկութեան ծաղիկն, ունեցեր է և ունի տակաւին իւր զգուողները և իւր հարուածողները. մերթ, ոմանց զրչին ներքև, կը ներկայանայ իբր հրեշտակ և կրթթէ հոմանիշ է բարի և անվեղ բառերուն. և մերթ, այլ լոց զրչին ներքև, վայրագ, չարասիրտ, անձնաւէր մարդկութեան վրայ կը ներկայանայ։ Չի միշտ զքեզ կ'երթոյ՞ և միայն խարտեաշ մագերը, անուշ ժպտը, թուխ կամ կապոյտ աշուրները՝ այն փոքրիկ էակաց, որոնք ընկճանաւոր մարդկութեան սիրոյ առարկայք են. ընդհակառակն, բարոյազբաք կամ հոգեխօսք, անոնց սրտին խորը թափանցելով, այն տեղ բունեալ կը գտնեն չարութեան և ո՛ր է կը կրցն սերմերը, սորոնց չունենալով տակաւին ինքնակախ ուժ, իմացականութեան, զարգացումն և գործելու ազատութիւն, մեղանշխար առիթներէ հեռու կը մնան։ Ուս-

կայն», ըստ ազգաբարձության լատին Գերթ-
թոդին, պէտք է պահել « յամենայնի չափ
և կշիռ » . վարպէն վրայ հիմնադու միջոց՝
պէտք չէ փուշերը զանց ընել : Այդ փուշերը
մաքրելն հաւ զատտարակութեան պաշտօնն
է, որ և արմատախիլ պիտի ընէ տղուն սրբ-
տէն ո՛ր է անպիտան բոլոր, և յարատեւ
շահմարք պիտի յաջողի այն անհարթ՝ պատե-
նէն հանձն բարեկիրթ և ուսեալ մարդը,
ինչպէս բոժոժն կ'ենլն թիթեռնիկն : Բայց
եթէ պակսի այդ զատտարակութիւնն, և
կամ ուղիղ սկզբամբք չի արուի, այն ատեն
հասակին հետ կը մեծնան նաև կրքերն և
ամենայն մոլութեանց բողբոջներն, որոնք ըն-
տանեաց և ընկերութեան քայքայելու պատ-
ճառ կ'ըլլան . ուստի կրնայ իրաւամբ ըստի-
մանկան համար, թէ « կայ ի զլորումն և ի
կանգնումն » մարդկութեան, ըստ առած կըր-
թութեան և սկզբանց . ապա որպիսի՝ մեծ
պատասխանատուութիւն ունին ծնողք և դաս-
տիարակք բովանդակ մարդկութեան առջև :
Սակայն՝ որքան խաշնդակօք լի է այն ճա-
նապարհն, որ պիտի հասցունէ մանուկը կըր-
թութեան տաճարին մէջ . ո՛րչափ սակաւք են
որք ձեռնուող կ'ըլլան խորթելու այդ գոժու-
սին ուղին . մանաւանդ թէ ո՛րչափ բազմա-
թիւ են անոնք, որք — թերեւ յանգեալ —
կը բազմացնեն և կը մեծցնեն այդ արգել-

ները, յորոց մի քանին պիտի յիշենք այս տեղ :

* *

Լրագիրքը, ներկայ ժամանակներս, մեծաւ մասամբ կարմիր ու սև տառերով դրոշմուած են. օր չանցնիր որ սպանութեան, — իւր բոլոր տեսակներով, — սև ոճիրներու, անիրաւութեան, գողութեան, և ընտանեկան գտուութեանց տեսարաններ չներկայացնեն մեզ, խղճամիտ ճշգրտեամբ, իբր թէ զատարանի կամ խոստովանարանի մը մէջ ըլլային, ամենագլխաւոր պարագաներն անգամ չի մոռնալով, որոնք ոչ միայն օգտակարք չեն՝ այլ և վնասակարք, Դարձեալ այն կարգ մը միւս պատանական դրքերն, որոնց մէջ ընդհանրապէս սիրոյ կամ նախանձու, յուսահատութեան և կրօնքի անարարեցութեան ապականիչ հով մը կը փչէ, և ուրիշ մոլութիւնք և կրքեր, որոնց ստուերն անգամ պէտք չէր նշմարել բարեկիրթ ընկերութեան մէջ, իրենց բոլան պակ նողկայի մերկութեամբ և կենդանի գոյներով — իբր մարդկային սրտի չարութեան լուսանկարք — կը պատկերին դիմացնին այն էջերուն մէջ, միթէ նուազ վնաս կը հասցունեն պատանեկաց, որոնք՝ գեռ այն ինչ նոր բացած իմացականութեան աչքերը՝ կը նետուին այդ միջին միջնաշրջանի մէջ, կը շընչեն այն թունաւոր օդը, և իսկոյն կը բըլշակնին, կ'աղօտանան անոնց տեսանելիքն, այն գորշ և արիւնզազանգ երևութից ներքև տեսնելով մարդկային կեանքը : Աստի կը սկսի անոնց յոռեանութիւնն, զգուանք և արհաւիրանք կը զգան առ ամենայն ինչ, որ ընկերային և մարդկային է. կը լքանին բարոյապէս այն խոշորագոյն առիթ, որոնց յաղթութիւն համար բաւական ուժ չեն տեսներ վրանին. տաղտուկ մը կը զգան կեանքէ, որուն առաջին ոտնփոխը գեռ հազիւ առեր են. անձնատուր կ'ըլլան իրենց կրից, զորս չեն կարող զսպել ըստ պատշաճի. ամենայն ստաբիլայ՝ ըստ իրենց մարքին կամ օրտին թելադրութեան՝ սև կամ ճերմակ կը տեսնեն, և այնպիսի ճանապարհաց կը հետին, որոնց մէջ՝ եթէ յաջ և եթէ յախճակ գառնան՝ միշտ անգունգ մը կը բացուի գիմաց :

նին : Այնուհետև անոնց առջև կը պատուի այն խորհրդաւոր վարագոյրն, որու միջէն նըմարելով — իբր նուիրական իրեր — հեղինակութիւն, օրէնք, ընտանեկան և ընկերական կենաց պարտք և պատշաճութիւնք, ի բնէ պատկառանք մը կը զգային և հպատակութիւն կ'ընծայէին անոնց :

Ահա տարուէ տարի կ'անձին ծնողաց և դաստիարակաց գանգատներն երիտասարդութեան մասին. ամենայն տեսակ ազմուկք և յոյգք, որոնք ոչ միայն վարժարաններ, համալսարաններ, ընտանիքներ, այլ և ամբողջ ժողովուրդ մ'իսկ կարող են յուզել բռն կերպով, խախտել զահել և պետութիւններ, ամենն ալ, ժողովրդական բացատրութեան համեմատ, « երիտասարդաց բարձին տակէն են » կ'ըսուի : Վիճակագրութիւնք, որոնք՝ թուարանական հաշուոց վրայ հիմնուած՝ ազգի մը քաղաքականութեան օգաչափն են, մարդու վրայ սարսուռ ազդելու չափ զուամբներ կը ներկայացունեն մեզ անձնասպանից, անտաւր և մոլեկան անձանց, որոնց մեծամասնութիւնը — ցաւայի է ըսել — երիտասարդութիւնն է կազմող. և այդ թիւն այնչափ աւելի կ'անձի, — լրագիր ընթերցողք պէտք չունին փաստերու, — որչափ որ ազգ մի յառաջադէմ է (այդ իրենց բառն է, չենք ուզեր նուագենցել իրենց պարծանքը) անկօնութեան մէջ : Եւ սակայն դոքա կը համարձաւին տակաւին ամենէն աւելի կիրթ, ուսնալ և քաղաքականութեան բարձրագոյն ծայրը հասած ազգեր համարել իրենք զիրենք :

Դեռ անցեալ օրերը կարպացիք Ֆիկարոյի մէջ հետեւեալ տեղեկագիրք, որ նպաստաւոր է առնչելայ խնդրոյն : « Մի քանի ամիս առաջ, John Lubbock, Լոնդոնի Համալսարանի գիտնազպիրն, ի Պարզ գուլմարուած ընկերաբանութեան համագլխային ժողովոյն նախագահելով, իւր մէկ ճառին մէջ դաստիարակութեան զովեստը ըրաւ, թէ նա ո'րչափ բարիք և օգուտ բերել է Անգլիոյ մէջ : — Առ մեզ, կ'ըսէ նա, բանտերու մէջ գտնուած անձանց թիւն, միջին հաշուով, սաստեկիւ հազարէն հինգ հազարի իջաւ : Դժանր յանցանքի համար բանտ մտնողներուն տարեկան միջին հաշիւն երեք հազարէն ութ

հարիւրի իկաւ. իսկ երիտասարդ յանցաւորաց թիւն տասնուչորս հազարէն եղաւ հինգ հազար: Չեմ ուզեր յոգնեցնել գէնջ, կ'ըսէ նա, հաշիւներով և թուերով, բայց ներեցե՛ք ինձ որ այս ալ աւելցնեմ թէ ազգասաց թիւն հազարին 47'էն 22'ի իկաւ ⁽¹⁾ » . և այս բանս զաստիարակութեան և կրօնից ազգեցութեան արդիւնք կը համարի: Մինչդեռ, ընդհակառակն, Գաղղիոյ և իտալիոյ մէջ տարուէ տարի աճելու վրայ է յանցաւորաց թիւն, և ընդհանրապէս այդ յանցաւորաց շատերն երիտասարդք են 16'էն 20 տարեկան ⁽²⁾: Հարկաւ պատճառ մի պիտի ըլլայ այս տարօրինակ երեւութիւն. և ի՞նչ է արդեօք. արդէն բաւական նշանաւոր բարոյագէտք իտալիոյ և Գաղղիոյ մէջ պատասխաներ են այս հարցմանս ⁽³⁾, և որ է. — Անգղիոյ մէջ կրօնքն միշտ զուգընթաց է գիտութեան, ուսումն և կրօնական կրթութիւն միմիայն միասին կ'աւանգուին աշակերտաց. մինչ ուրիշ տեղեր, և առանձինն Գաղղիոյ և իտալիոյ մէջ, ուսումն և կրթութիւն ոչ միայն իրարմէ անջատ են, այլ և միմեանց թշնամի բաներ կը նկատուին, իսկ կրօնագիտութեան և ոչ անունը կը յիշուի դպրոցաց մէջ:

1. Figaro, n. 54, 1895.

2. Իտալացի յօգուածագիր մի կ'ըսէ թէ, ոճրագործաց հարիւրին քսանը պատանիք են: Գաղղիացի գիտնական մը տեսաւ որ մը Petite Roquette-ի մէջ — որ Պարիզու մեծ բանտերէն մին է — վեց տարեկան տղայ մը, չգիտեմ ինչ յանցանքի համար: Այդ մարդն սարսուռ մի զգաց, երբ տեսաւ այդ հասակի տղայ մը բանտին ապականիչ միջավայրին մէջ, ուր բարենեւն աղաճող էր չարանան, ուր ոչ մի առաքինութիւն կարող չէ հաստատուն մնալ: Այդ բանին վրայ հասար մը գրեց նա, յորում կ'ողբայ այն թուշառ տղուն վիճակը և մանկական ոճրագործութեան առջեւ աճելու միջոցները կը ցուցնէ: Այդ գիտնականն կը կոչուի Հենրիկոյ խօլի (Henri Joly) և գրքին անունն է. *Le combat contre le crime*. (Sigma — *Illustrazione italiana*, Milano. etc.):

3. Ada Negri, *Fatalità*. — Lino Ferriani, *Minorenni delinquenti* (Milano, Kantorowits, 1895). — Lavissee, etc.

Մտաւախապատ տարիներու մէջ, մերթ ընդ մերթ լուսամտի հանճարներ — փարոսներու նման — երևցան զրական ասպարիզին վրայ, այս ինչ կամ այն ինչ թերթի կամ մատենի միջոցաւ հնչեցնելու իրենց ձայնը՝ ընկերութեան այդ վէրքը և անոր դարմանը մատնանիչ ընելու համար ⁽¹⁾: Սակայն մեռախուզն շատ թանձր էր, հազիւ թէ մտակայից վրայ ազօտ լոյս մ'արձակեցին նորս և ոչ այլ ինչ. անարձագանգ ձեացին անոնց ազդարարութիւնք, որպէս թէ, մեր Բերթուզհօր բսածին համեմատ, « յակամիս մեռելոց լինէին խօսեցեալ »: Բայց անտարակոյս ամէն ոք համոզուած է թէ այդ բանին զարմանք միայն զաստիարակութեան ձեռքն է, բարեկիրթ զաստիարակութեան ըսել կ'ուզեմ:

Գաստիարակութիւնն՝ նկարչին վրձինն և արձանագործին դուրն է. մոգական գաւազան մ'է՛ դա, որ կար սակի կը փոխէ, անհարթ քարի կտորէ մը կը հանէ գեղարդիկակ Ապոլոն կամ Մովսէս մը, որ — փրկիտայ մատանց մէջ — Ուրիքիական Արամեզդ մը յառաջ կը բերէ, և ուրիշ ճարտարի մը ձեռաց մէջ Աղեքսանդր կամ Արեմաս մը. սակայն, վայ, եթէ այդ գործին սգէտ արուեստաւորի մը հանդիպի, զարձեալ՝ ուրիշ ձեռք ներքէ՛ անհեթեթ ժայռի կտոր մը պիտի ձուլ: Դժբախտաբար, ոմանց ձեռքը, զաստիարակութիւնն չափէ դուրս առաձգական զօրութիւն մը կը ստանայ, որով ըստ քիմն կ'երկնայ կամ կը կարծի, կը լայնի կամ կ'ամփոփի, հետեւաբար իրեն խնամոց յանձնուած մանկան խիղճն ալ լայնելով և ամփոփելով:

1. Շատ գեղեցիկ է Ժիւլ Սեմինի այն բացատրութիւնն, որ գրեթէ առածի տեղ անցաւ ի Գաղղիա, « *Il faut revenir au Dieu* », զոր գրեց բարոյականի և դպրոցական կրթութեան վրայ խօսած միջոց: Նշնպէս գեղեցիկ է Lanjuinais-ի խօսքն, — զոր համարձակեցաւ ըսել քաղաքականաց աշխարհի նոր Բաբելոնին մէջ, ուր ամեն միտք՝ ամեն գլուխ մէկ մէկ կ'արծիւ ունի բարոյական մասին. « *Tot capita, tot sensus* », — թէ անկարելի է բարոյական առանց Աստուծոյ. « *Il n'y a point de morale sans Dieu* ».

Աստ դաստիարակութիւն կամ կրթութիւն
ընելով չեմ հասկնար այն կանոնագիրքը, —
զոր և Savoir-vivre կը կոչեն, — որ ըն-
կերութեան պահանջած արտաքին ձևակեր-
պութեանց միայն ուշ կը պնէ, զգեստուց
կամ ձեռնոցներու ձևը և գոյնը որոշելով,
արմատից իւրաքանչիւր անդամները — լուրջ
մարդու մը ծիծաղոյն անգամ շարժելու չափ —
կոտորակներու վարժեցնելով, քայլերուն առ-
նուածքը չափըփելով, շարժմանց թիւը և
կերպերը հաշուելով, իբր թէ մարմնամար-
զութեան փորձեր ընելու հարկի մէջ զրու-
նուէին, և ուրիշ ասոնց նման ծաղրական բա-
նէր: Չեմ հասկնար դարձեալ այն արուեստը
(արուեստ կը կոչեմ, զի պիտուի՞րեան սահ-
մանէն դուրս կ'ելլէ): որ տղու մը արտա-
քինը գեղերեսնելով միայն, աչք շլացնող
փայլի մը ներքեւ քողարկել կը ջնայ հոգ-
ւոյն թերութիւնները՝ փոխանակ ուղղելու գա-
նոնք. և որ չարագոյնն է, անունները փո-
խելով, մշտութիւնը իբրու աշխարհիկ անձի
մը վայել առաքինութիւն կը ներկայացնէ.
սխալակալութիւնը՝ քառաչափ անունով կը մկը-
տէ, վրէժխնդրութեան ոգին՝ գովելի պա-
տուասիրութիւն կը կոչէ, կեղծաւորութիւնը՝
նրբութիւն և մարդասիրութիւն, զուրիշն ար-
համարինը՝ ասպետական քաղութիւն, կրո-
նից անտարբերութիւնը՝ խո՛ր (առողջաբաշխին
հորին չափ — կը յիշէք անշուշտ իշովբոսի
առակը) փիլիսոփայութիւն և բարձր հանճա-
րոյ նշանակ, կրից զո՛հացումը՝ անհրաժեշտ
պահանջ մի ընկերական ուղիորութեանց: —
Այլ դաստիարակութիւն կամ կրթութիւն ը-
սելով կը հասկնամ աստ այն գիտութիւնը,
որ կրօնից և բարոյականի ուղիղ սկզբունք-
ները կը տակէ տղու մը սրտին մէջ, հոգ-
ւոյն թերութիւնները կ'ուղղէ, կրից սանձ
գնել կը սորուեցնէ, հաւասարապէս միտքը և
մարմինը զօրացնելու կը նպաստէ, զգացում-
ները կ'ազնուացնէ, սիրտը կը կրթէ, այն-
պէս որ աշակերտն՝ երբ ելնէ գարոցէն՝ կա-
րենայ անթերի կերպով կառարել մարդկու-
թեան մէջ այն մտաւոր և բարոյական դերը,
որ կը պատկանի իրեն:

* *

Տարիներէ ի վեր ազգային գրականութեան
շրջանակին մէջ զգալի գաւառակութիւն մը կը
նկատուէր կրթական գրող մասին, թէ և
այլեայլ հրատարակութիւնք ինչ ինչ գրքոյ-
ներու և բարոյական վէպերու ի Պոլսի, ի
Վիեննայ, ի Վիենտիկ և այլուր, նպատե-
րէին — զէթ մասամբ միայն — այս փա-
փուկ և կարեւր գործոյն: Սոյն պարապը ը-
ցնելու դիտմամբ, բաւական ժամանակէ ի վեր
հաստատուեցան ձեռնհաս անձինքներէ թէ՛
Ռուսահայոց և թէ՛ Տաճկահայոց մէջ այլեայլ
թերթիկներ, առանձին կերպով մանկանց
նուիրեալ, Աղբիւր, Երազիկ և ուրիշ տոյսալի-
քնքուշ անուններով, որոնց մէջ — ի՞նչ վնաս՝
եթէ դրա չեն կրցած միշտ նոյն յստակու-
թիւնը կամ թարմութիւնը պահել, մանա-
ւանդ յետինն՝ որ յաճախ ձեռքէ ձեռք ան-
ցնելով՝ գրեթէ թառամելու վրայ էր — կրց-
են տղայք բաւական նիւթ պտնել իրենց
միաբն ճորտացնելու և գիտութեան ծարաւը
անցնելու: Սոյն նպատակաւ, անցեալ տա-
րուան շրջանին մէջ, լոյս տեսաւ Յ. Մատ-
թեանեան տպարանէ (ի Է. Պոլսի) գրքոյ մի,
թարգմանեալ գաղղիերէնէ ի ձեռն Վարդան
Գ. Թովմասեանի, հեղինակութիւն իշխա-
նուհի Մ. Ուստուսովի, որոյ անունն է Էյբր-
թոսթիւնը օրօրոցնէ (յաւազայն չէ՛ր գրել որո-
րոցնէ) պարտի սկսիլ. և կարելի՞ էր միթէ
ուրիշ տեղէ կամ ժամանակէ սկսիլ զայն:

Մանուկն, որորոցին մէջ, նորատունկ բոյս
մ'է, գիւրթեք, զգայուն, փափուկ հողի մէջ
գետեղուած, զոր կարող է փորքի հով մի
խաղաղելով կամ աստիկ ջերմութիւն մի շո-
րացնել. որչափ հակողութիւն և խնամք կը
պահանջէ նա, որուն շուրջը կը ազդան՝ ճան-
ճերու նման՝ բիւր դաւանանք կենաց, որոնց
դէմ անկարող է նա պաշտպանել ինքզինքը:
Սիրտն, որ մարդու ամենէն աւելի կակուղ
մասն է, ևս աւելի այն հասակին մէջ, դի-
րաւ կը ստանայ և ի խոր կը քանդակէ ա,
մենայն զգացում և սկզբունք՝ որ կը արու-
ի իրեն, նման հաշած ապակոյ, որուն արուես-
տաւորն՝ իւր ճարտարութեան համեմատ՝ կա-
րող է տալ ամենայն ձև և զարդ: Եւ Ե՛ւ

է արդեօք, որ հետախոյզ աչօք է արտուլ, իւր ամենակարեւոր գործերն անգամ մոռնալով, կը հսկէ միշտ որօրօցին շուրջը. — ո՞վ է նա, որուն սիրան թունդ կ'երչնէ և կ'իջնէ այդ փոքրիկ արտեկին ամենայն բարախմանց հետ, որոյ ամենայն ճիշդ կ'ունենայ իւր արօձագանգը և ամենայն շարժումն կը պատկերի՝ իբր ի հայելու՝ անոր հոգւոյն մէջ. — ո՞վ է նա, որ գրեթէ սղէն անբաժան, անոր հետ կարծես շունչ կ'արձու՝ կու տայ, և որոնք՝ երկու մարմնաց մէջ՝ մէկ հոգի են. ո՞չ ապաքէն Մայրն. — ահա առաջին և կարեւորագոյն դաստիարակն է Ոյ որ, թէ և գերաստիճան և ուսնալ, զգայուն և խոհական դաստիարակ ըլլալ, կարող է երբեք մօր մը զգացումը և զօրովը ունենալ առ մանուկն. նա քան զամէնն աւելի մօտ է սղուն և մօտէն կը տեսնէ անոր թերութիւնները, կը զգայ անոր պէտքերը, կը հասկնայ անոր լեզուն և միտքը՝ հեռեւաբար նա միայն կարող է մանկութեան ստոյգ դաստիարակն ըլլալ:

Արդէն իսկ վերայիշեալ գրքուկին հեղինակն նուիրեր է զայն « Առ մանկամարդ կանայս », որ է՝ առ մարս, և « առ օրորդս », որոնք կը պատրաստուին մայր ըլլալ: Թէպէտ և ընտանեկան շրջանակէն զուրս չելլէր հեղինակն, և կրթութեան տարրական կանոնները և սկզբունքները միայն՝ կ'առնէր, զուին այդ գրքուկին մէջ, յորում միակ և պիտաւոր զործին է մայրն, սակայն այն իւր համառօտութեան մէջ շատ աւելի կարեւոր բաներ կը բովանդակէ, քան ուրիշ հատուր գրքեր: Արդէն նոյն ինքն հեղինակն կը բացատրէ Ներածութեան մէջ իւր գլուխութեան նպատակը, որ է « գիւրացնել այն ճիգներն և ջանքերն, զորս իւրաքանչիւր (մայր) պիտի պարտաւորի ի զործ դնել... մանուկները խնամելու և կրթելու համար ». այն մանուկները՝ որոնք իրենց փոքրիկ հասակէն մեծութեան կնիքը կը կրեն սիրանին, ինչպէս կ'երգէ դարուս ամենէն աւելի նշանաւոր փռանկ քերթողն, Վ. Հիւզոյ, թէ « Ամէն մարդու մէջ կայ մանուկ մի, և ամէն մանկան մէջ կայ մարդ մի »: « Ո՞չ ապաքէն այս օրուսն մանուկն է, կը յաւելու հեղինակն, որ պիտի լինի կամ քարերարը կամ

ընկերական պատուհասը ապագային մէջ բազմոց, կամ ուրախութեանց և կամ տրամալթեանց աղբիւրը, և այլն »: Տղուն որօրօցէն սկսեալ մինչև վարժարանին գրագարանաց առջև կծկած նստիլը, առաջին քայլերէն մինչև պատանեկութեան հասակը, այն աւելն խնամք և մոտադրութիւն՝ զոր պէտք է ունենայ մայր մը իւր զակին վրայ՝ կը զբաւնուին այս գրքուկին մէջ. չկայ վայրկեան մը՝ յորում՝ վրիպի մանուկն մօրը աչքէն. քնոյ կամ արմնութեան միջոց, առողջ կամ հիւանդ ժամանակ, զուարճութեան և կերակրոյ պահուն, լալու կամ ծիծաղելու ատեն, աւելն տեղ և ամէն վայրկեան կը տեսնենք մայրը աղուն քով, սր կը հսկէ կամ կը խնայ, կը յանդիմանէ կամ կը սիրտի, կու լայ կամ կը ծիծաղի սղուն հետ. նկարագիրն է դա ճշմարիտ մօր մը, որ ստուգիւ ըմբռներ է իւր վիճակին ոգին և խղճմտանքով կ'ուզէ կատարել իրեն պարտքը: Երթուխութեան նպատառը և մաս կազմող ոչ մէկ բան զանց եղած չէ՝ անդ. ջերմութիւն և օդ, քուն և սնունդ, զգեստեղէնք և խաղալիքներ, զուարճութիւնք և պատիժք, առաքի նութիւնք և վարձաւորութիւնք, պակասութիւնք և յանդիմանութիւնք, մարմնոց և ձեռաց ճարակութիւնք, դրամի գործածութիւն և ողորմութիւն տալու բարի սովորութիւն, հիւանդութիւնք և առողջապահական կանոններ, երաժշտութեան և գծագրութեան օգտակարութիւնք, գրքերու ֆաւան կամ օգուտն, ընտանեաց և կրօնից սէրն և յարգանքն, միով բանիւ այն ամէն նիւթական և բարոյական միջոցը և պատուէրը, որոնք կարեւոր են աղայոց հոգին և սիրար կրթելու՝ հրահանգելու, միտքը և մարմինը զօրացնելու, կը գտնուին սոյն գրքուկին մէջ:

Ամենակարեւոր մատենիկ մ'է սա, առձեռն գործի մը կրթութեան, զոր ամէն մայր ալ պէտք է ունենայ, ուշի ուշով ընթեռնու գայն, և ջանագ զործադրել ըստ կարի մէջը զատուած պատուէրները և խրատները իւր զաւակը կրթելու միջոց. « Բազմ սխալ կարծիքներ, անպատեհ վարմունքներ, զեղծումներ պիտի վերնանայսու ընտանեաց միջէն, որոնք գոյութիւն ունին տակաւին զաւառաց

մէջ, եթէ այդ ընտանեկան կրթութեան, ինչպէս որ պէտք է, հոգ և խնամ տարուի. ո՛րչափ կը դիւրանայ դաստիարակաց պաշտօնն, և ի՞նչ մեծ օգուտ կ'ըլլայ ամբողջ մարդկութեան. վասնզի, եթէ պակսի այդ նախնական կրթութիւնն, այնուհետեւ աւելորդ պիտի ըլլայ « Դպրոցի գրասեղաններէն դաստիարակութիւն պահանջել, ինչպէս կ'ըսէ հեղինակն. անիրաւութիւն է » (106 էջ), վասնզի ուսմանը և դիտութիւնը, ո՛րչափ ալ բարձր ըլլան, չեն կարող դաստիարակութեան պակասը լցնել. մանաւանդ թէ կրնան աւելի փնասակար և վտանգաւոր ըլլալ, եթէ « մըտաց հոգն, որու վրայ կ'իյնան ուսուցման սերմերն, պատրաստուած չըլլայ », ինչպէս որ վտանգաւոր է սուր դանակ մը տղուն ձեռքը տալ. Այն փորքիկ հասակէն պէտք է խել կրից արմատները և տնկել առաքինութեանց սերմերը. վասնզի, տարիքն առնուով, աւելի ևս կը հաստատուին անոր թերութիւնը և չար ունակութիւնը, և յետոյ ոչ վախով կամ սպառնալեօք կարելի է ուղղել, — զի « գաստիարակութեան մէջ նկատողութեան արժանի կարևորագոյն կանոնն է չի վախցնել երեքը » որ շատ վատ հետեանքներ կ'ունենայ, — և ո՛չ ալ զիջանելով անոր կամ կամքը կատարելով, վասն զի այդ ալ փնասակար է. այնուհետեւ զանոնք ուղղութեան բերելու ուրիշ միջոց չկայ, բայց միայն մերթ անուշութեամբ օգտտելով և մերթ խստիւ ազդարարելով, երբեմն ալ — հասակին համեմատ — պատժելով զանոնք՝ ուր որ հարկ տեսնուի. սակայն այդ պատժոց մէջ ալ խոհեմութիւն և չափաւորութիւն պէտք է. իսկ ծեծ, ապտակ, նախատական խօսքեր կամ յիշոց այնչափ հեռու և հակառակ են արդի կրթութեան ծրարդէն, որ անասնոց հետ առեւած վարուելու միջոց զանոնք չափի դուրս շտալելը տամարդութիւն և անպետելիւն կը համարուի. Միով բանիւ ներկայ գրեցիս, իւր ամբողջութեան մէջ նկատելով, մինչև ցարդ մեր ազգին մէջ լոյս տեսած բոլոր կրթական հրատարակութիւններէն ամենէն աւելի համառօտ, օգտակար, գործնական և դիւրագին դիրքն է, « զոր ամէն որ դիւրակարգ և սաանալ »

*
* *

Յօդուած տարտեւելն առաջ կ'ուզեմ հաւանցի ակնարկ մ'ալ տալ թարգմանութեան կամ լեզուն, բայց բոլորովին դիտաւորութեանս պարտ է — թէ ո՛չ հակառակ — ստատիկ կերպով « խժոժել զայն... բաղդատապէս անշտան սխալի մը համար », ինչպէս կ'ըսէ թարգմանիչն իւր « Երկու խօսք — ին » մէջ, որուն ինքն իսկ ուրիշ պատճառ չի տար, բայց եթէ « օգուտ մը չունի և չի կրնար ունենալ » կ'ըսէ : Այդ մասին, կը խոստովանիմ որ, համակածիք չեմ թարգմանչին. վասնզի քննադատութիւնն միշտ իւր օգուտը ունի, նման կայծքարի զարնելուն՝ միշտ լոյս մը կ'արձակէ :

Սակայն հարկ է հաւանիլ թարգմանչին, զի նա ինքն ճարտարութեամբ կանխելով քահ զայլս, խշռովի կը խոստովանի անկեղծօրէն թէ « քաջ հայկաբան և գաղիաբան (պէտք էր գրել գաղղիաբան, զի լատին արմատէ յառաջ կու գայ՝ gallus և gallicus — գաղղիացի, յորմէ կ'իլլայ նաև gallicanisme և gallicisme, և այլն), ըլլալու յաւակնութիւնը չունի » և մանաւանդ թէ իւր « թարգմանութեան մէջ հայերէն ոճի և թարգմանութեան վերաբերեալ ո՛ր է սխալմունք կամ խորթութիւնը մոռա գտած ըլլալուն » հաւանակածութիւն մը՝ կասկած մ'ունենալ կը ցուցնէ. խոստովանութիւն մը, որ այնչափ հեռու է մեր ներկայ դրագիտաց բերնէն, որ կը օտիպոյիմ ըսել թէ պատիւ կը բերէ թարգմանչին, և քննադատին ալ զայրոյթը կը հանդարտեցնէ. վասնզի ո՛վ չէ սխալած գրեւ լու կամ թարգմանելու միջոց, ինչպէս կ'ըսէ Որոտիոս.

« Սակայն յերկար ի վատտակ՝ մարթի թէ բուն սրպլըրդիցի * », թէ և քուսն ապրդեղոս համար հարկ չկայ որ միշտ երկար ըլլայ վատտակն : Այս պատճառաւ կը խնդրէ թարգմանիչն որ ներդաճաւորաբար և խղճամտաբար վարդաճէ քննադատը, որուն ես ալ պիտի ջանամ մտապիւր ըլլալ :

Թարգմանութիւնն ընդհանրապէս յաջող է, տեղ տեղ շատ խղճամիտ և չափազանց կապկպուած բնագորին հետ. լեզուն բաւական յտակ, կոկ և սահուն է. ամէն էջին մէջ ալ գրուածութիւն մը կը տեսնուի — յարգելով միշտ բացատրութիւնը — խորթ և օտար բառեր գործածելէ. միայն քանի մի խրթնութիւնք կը նշմարուին այն ամէն տեղ, ուր որ գաղղերէն լեզուի աստիկ ազդեցութիւնը չէ կըրցած զսպել թարգմանին. շատ համեստ գրտնուելով՝ չէ ուզած գործածել նաեւ այն ա. գատուութիւն, որ ըստ ինքեան օրինաւոր էր իրեն: Մերթ այնպիսի պարբերութիւններ կան, — բարեբախտաբար շատ սակաւք են, — զորոնք հասկնալու համար ստիպուած է մտաւ մտքով գաղղերէն թարգմանել. և որպէս զի չի համարուիմ զուր տեղ ըրած այս դիտողութիւններս, մէջ պիտի բերեմ նոյն գրքէն մի քանի օրինակներ:

1. « Համոզուած եմ որ մենե (մեզմէ) իւրաքանչիւր որ իրապէս (ստուգիւ, իրօք) կը տառապի այն բանով որ կը վերաբերի իրեն անհատականապէս » (105 էջ). այս, ընթերցողն, եթէ փոքր ինչ հայերէն ալ գիտնայ և փիլիսոփայութենէ ալ բոլորովին զուրկ չըլլայ, կը քրտնի՝ իրապէս կը տառապի հասկնալու այդ լեզուն, որ՝ թուի թէ՝ անհատականապէս թարգմանին յատուկ է, իրեն կը վերաբերի. ապա զայն ի՞նչպէս պիտի հասկնան անոնք, որոնց առանձին կերպով ուղղեալ և նուիրեալ է գրողիս:

2. Ի՞նչ հասկնալու է դարձեալ « անձնական նախաձեռնութիւն » բառերը. գաղղերէն ո՞ր բառերուն կամ բացատրութեան կը համապատասխանէ:

3. Փոքր ինչ տարօրինակ կ'երևի հետեւեալ պարբերութիւնն, « գերազանցապէս ապօրինաւոր կը գտնեմ զայս, և այլն » (130 էջ). սաստի՞կ ըսել կ'ուզէ արրեօք, չափէ դռն, արտաքոյ կարգի, և այլն. այդ գերազանցապէս ապօրինաւոր բացատրութիւնն կը յիշեցնէ մեզ — աղօտ կերպով — վեհադատար գրողներուն ժամանակները:

4. Ոչ ինչ նուազ գաղղիաբանութիւն կը բուրէ նաեւ այն բացատրութիւնն, « իմացականապէս շատ ուսուեալ անձ մը » (115

էջ), թէ և ուղղին համար շատ դիւրին է հասկնալ, եթէ միայն վայրկեան մը ամփոփէ բոլոր ուշը և այդ բառերուն համապատասխանող գաղղերէն խօսքերը յիշէ, և անոնց կարգը փոխելով՝ ետև առաջ գնեցով քիչ մը միաբը յոգնեցնել ուզէ:

5. Հարկաւ, այլապի գործողութենէ յետոյ, ընթերցողն աւելի դիւրութիւն պիտի զգայ հասկնալու հետեւեալը, որ նոյն օրէնքով թարգմանուած է. « երբ տղայ մը բացառապէս օժտեալ է » (108 էջ). թերեւս միայն քիչ մը մթութիւն ըլլայ բացառապէս բառին մէջ, բառ մը՝ որ մեր սովորական բառարանաց մէջ չի գտնուիր, թէ և շատերուն բերանը լսել եմ և գրութեանց մէջ ալ կարդացեր եմ:

6. Երբեմն ալ նոյն բառին կամ դերանունին կրկնութիւնը, մի և նոյն կամ մօտ տողերու մէջ, խրթնութիւն յառաջ կը բերէ. « Եւ որոնք իշրովի (գեղեցիկ է, բայց աւելի պարզ կ'ըլլար ըսել իրենք իրենց) կը հարցնեն արդարեւ, թէ ինչո՞ւ համար այնքան չարարուած են իրենց մանկութեան մէջ՝ իրենց ուսուցուելու համար այնպիսի բաներ՝ օրք երբէք օգտու մը չեն ունեցած իրենց համար » (109 էջ): Բանակ մը իրենցներու, մանք ոտքի վրայ կանգուն կեցած և այլք գետին տապալած, որոնք անգին շփոթութիւն մը կը ձգեն ընթերցողին մտքին մէջ:

7. Գաղղերէն genre բառը հարկ չկայ ամէն անգամ սեռ թարգմանել, վասնզի երբեմն ալ կը նշանակէ տեսակ, կերպ, և այլն (espèce, sorte, manière, etc), ինչպէս յետագայ պարբերութեան մէջ. « աշխատութեան և ոչ մի սեռը (տեսակ պէտք էր թարգմանել հոս) ըստ ինքեան ամօթալի կըրնայ ըլլալ » (109 էջ):


8. Երբեմն ալ բառերը — թէ և ընտիր և յստակ հայերէն ըլլան — եթէ պատշաճ կարգաւ դրուած չըլլան, կը մթնան անհասկնալով ըլլալու չափ. օրինակ իմն, եթէ սոյն բառերը, « այսու անգլթօրէն վարուելու առաջնորդած կ'ըլլանք զայն կենդանեաց հետ » (134 էջ), հետեւեալ կերպով շարենք « այսու առաջնորդած կ'ըլլանք զայն (մանուկը) անգլթօրէն. վարուելու և կենդանեաց հետ », կարծեմ աւելի դիւրեմաց կ'ըլլան:

9. Կը գանուին դարձեալ այնպիսի բա-
ռեր, որոնք սովորաբար գործածութեան մէջ
չեն, ինչպէս քոյշատրել, շարունակային,
ձախային, ինքնակենսագրոտրիան, խոզախ-
տառոր (լաւ կ'ըլլար քովը դնել ասոր գաղ-
ղերէն բառը), դրօշակակիր (սխալ է, պէտք
էր ըսել դրօշակիր), և այլն: Իսկ այն ար-
հիարարարոտոտրիան բառը (128 էջ) այնքան
խորթ և խրթին է, զոր միայն արհիարտեղ
բառով կարելի է բացատրել:

Չանց ընելով ասոնց նման ուրիշ բառեր
և պարբերութիւններ, որոնք — բիշ մը վեր,


բիշ մը վար — այսպիսի գիտողութեանց սահ-
մանէն անպիսի չեն անցնիր և միւս կողմանէ
ալ գրքին ամբողջութեան փաստ չեն բերեր,
կը վերջացնեմ խօսքս՝ գովելով թարգմանչին
ընտրութիւնը և աշխատութիւնը, որ կըցեր
է մեր հասարակութեան այսպիսի կարեւոր
ծառայութիւն մը մատուցանել, և քաջայերեւ-
ում միանգամայն որ ապագային մէջ ալ —
այս մի քանի գիտողութիւններէն լքանելով —
ձեռնթափ չըլլայ այդպիսի գործերէ, յիշելով
լատին առածը որ կ'ըսէ. « Errando di-
scitur. Միայնելով կը սորուեցուի »:

Հ. Յ. Թ.



Կ. ԿԱՆՏՈՒԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Խտայացոյ մը խորհրդածորիաններ)



Ի՛նչ նախելի էղիպտացեաց քաղա-
քային օրինաց 'համեմատ' հիմայ ալ
սովորութիւն ըլլար մերթ ընդ մերթ ի
ձայն քաղահնոյդ փողերու՝ մեռեալները
դատելու կողմէ զօղովուրդն, որպիսի և
նորչափ բողբոսութիւն պիտի հաւաքուէր՝ վաղը
կամ միւս օր, Կեսար Կանտուի գաղաղին
շուրջը:

Ամենէն առաջ պիտի վաղէին մանկունք՝ ի-
րենց նախնական դաստիարակութիւնը՝ իրեն
յօրինած տարրական դրեքտիւն ընդունողք, ո-
րոնցմով վաթսուս տարի յառաջ կը շնար տը-
պաւորել անոնց մօրքին մէջ այն դաստիարակա-
կան և հրահանգական նորութիւններն և ուղ-
ղամտութիւնը, որոնց վրայ նորերէն՝ մեր ժա-
մանակակից հետեւակ անձերէ, այնչափ շատ-
շատայն աւելորդաբանութիւններ կը լսենք:

Մանկանց պիտի հետեւէին աղնուսասուն կա-
նաք՝ որոնց կէս դարէ ի վեր սիրտը յազած է
իր վէպերով և Մարգարիտա Պոստոկոյա վիպա-
սանութեամբ:

Պեղիկաց և գործաւորաց համար՝ ինքն եղած
է առկիներէն մէկը՝ պարտուց աղնուականու-
թիւնն և իրաւանց մեծփայելութիւնն ճանչը:

Նոյ՜ Ոմերոնոյ առակախօս, Կարողու մեծեկէք-
քիացի, Ուղղամիտ և բարեսիրտ, Գործաւորի մը
քղրապանակը, Չգոչուրիան, և ասոնց նման գրը-
քայիներով, որ ոսկեղէն բովք են մանաւանդ
օգտակար հմտութեանց, գործնական վարդա-
պետութեան և բարոյական ու քաղաքական ի-
մաստութեան:

Սկսած գիտունք, բանասէրք և արուեստագէտք,
որոց լոյս եղաւ և ուղեցոյց՝ հին և նոր գիտու-
թեանց բաւզին մէջ:

Եւ ի վերջէ՛ պատմական աղնուապետութիւն
նահապետաց և իշխանաց, կայսերաց և թագա-
ւորաց, բռնաւորաց, սրբաց, զիւցազանց, քա-
հանայապետաց, հերետիկոսաց, փիլիսոփայից,
որք պատմութեան վեց հազար դարերու շրջա-
նին մէջ՝ խորունկ հնաք մը թողին երկրիս առը-
վին վրայ:

Առեւք ամենքը, չի տարակուսինք ամենեւին,
առաջի այս պատմաբանին, քննադատի, իմաս-
տասիրի և դաստիարակի, չունին ուրիշ խօսք,
ուրիշ ձայն՝ բայց եթէ զայն՝ զոր մեք այսօր կը
հռչակենք թէ

Պատուեալ ամենամեծ Ուսուցիչը:

Վասն զի կրնայ ըսուիլ թէ Կանտու ապրեցաւ